ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Մայիսի 4-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի բարձր նախագահությամբ, նշվեց հայ տաղանդաշատ բանաստեղծ Պարույր Սևակի 75-ամյա հոբելյանը:

Ճեմարանի դասախոս Սուրեն Դանիելյանի բացման խոսքից հետո, ավելի քան մեկ ժամ դահլիճում հնչում էր սևակյան պոեզիան: Ճեմարանի 4-րդ լսարանի սաների ներկայացրած գրական-գեղարվեստական հայտագիրն ընդգրկում էր Սևակի կոմիտասական դողանքները, հայրենասիրական ու սիրային բանաստեղծությունները:

Հանդիսության ավարտին օրհնության խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալանը:

Ցերեկույթն ավարտվեց Ճեմարանին բազմիցս իր օժանդակությունը ցուցաբերած «Կայծակյան» հիմնադրամի մրցանակների հանձնմամբ: Մրցանակներ տրվեցին 1997-1998 թթ. ուսումնական տարվա ընթացքում իրենց լսարաններում լավագույնը ճանաչված 10 ուսանողների և երկու մրցանակ՝ լավագույն ստեղծագործական շարադրության համար:

ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ

Մայիսի 6-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հոգեկոչումն նշանավոր կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի 75-ամյա հոբելյանի:

«Մխիթարանք է, որ այսօր աղոթք ենք հղում հանուն հայ ժողովրդի մեծանուն զավակ Սերգեյ Փարաջանովի, մի արվեստագետի, որի արվեստն իր ազգային ակունքներով հանդերձ դասվում է համամարդկային արժեքների շարքը», - հավարտ արարողության ասաց Սրբազան Հայրը:

Արարողությանն իր հոգելուր երգեցողությամբ մասնակցում էր Արարատյան Հայրապետական թեմի «Մանկունք» երգչախումբը:

Արարողությանը ներկա էին հավատացյալներ, Փարաջանովի արվեստի բազմաթիվ երկրպագուներ:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ